ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

04.09.2017թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ

Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար

Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Է.Հախվերդյանը, Վ.Սայադյանը, Ա.Ադլոյանը, Վ.Դոխոյանը, Ս.Խեչումյանը, Գ.Բաղդասարյանը, Մ.Սարգսյանը, - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական

Ա.Մանուկյանը - մարզպետի խորհրդական

Ա.Սարգսյանը - մարզպետի օգնական

Տ.Էվինյանը - մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. ա) Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
   բ) Անկախության օրվան նվիրված միջոցառումների մասին
   /Զեկ. Ն.Սարգսյան/

2. ա) Նոր ուսումնական տարվա սկզբին կատարված միջոցառումների և աշխատանքների մասին
   բ) Դպրոցների կոմպլեկտավորման մասին
   /Զեկ. Մ.Սայադյան/

3. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
   /Զեկ. Հ.Պապոյան/

4.Քաղաքաշինական ծրագրերի ընթացքի մասին
   /Զեկ. Ա.Ջանազյան/

5.Գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին
   /Զեկ. Գ. Հակոբյան/

Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի համայնքների ղեկավարների կողմից սեփական եկամուտների հավաքագրման եռամսյակային ցուցանիշները ապահովելու նկատմամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին՝

ա) Համեմատական վերլուծություններ կատարել և ներկայացնել տեղեկատվություն նոր ուսումնական տարվա աշակերտների թվաքանակի փոփոխությունների վերաբերյալ:

բ) Հնարավոր միջոցներ ձեռնարկել մարզի հանրակրթական դպրոցներում ներառական կրթության անցնելու հետևանքով կատարվելիք միջոցառումների ու աշխատանքների ուղղությամբ:

գ) Համագործակցել համայնքների ղեկավարների հետ պարտուսից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և ուսուցումը շարունակելու աշխատանքների իրականացման գործում:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆ**

Արծ.Ս. Մակարյան

Հեռ. 0322 /4-32-99/